ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի հունվարի 24-ի N 13-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 12.1 կետի՝ **որոշում եմ.**

1. 2019 թվականի սեպտեմբերի 19-ին *«Լազուր»* պետական ոչ առևտրային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի ղեկավարությամբ անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն *«Քիմիական վտանգավոր օբյեկտում վթարի դեպքում անձնակազմի պաշտպանության միջոցառումների իրականացումը»* թեմայով:

2. Ուսումնավարժության կազմակերպման և անցկացման նպատակով ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում 2019 թվականի սեպտեմբերի 19-ին *«Լազուր»* պետական ոչ առևտրային կազմակերպությունում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն N 2 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում 2019 թվականի սեպտեմբերի 19-ին *«Լազուր»* պետական ոչ առևտրային կազմակերպությունում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության մտահղացման սխեման՝ համաձայն N 3 հավելվածի,

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում 2019 թվականի սեպտեմբերի 19-ին *«Լազուր»* պետական ոչ առևտրային կազմակերպությունում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման պլանը՝ համաձայն N 4 հավելվածի:

4. Ուսումնավարժությանը ներգրավել՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության Հրազդանի թիվ 44 հրշեջ փրկարարական ջոկատի 2 մարտական հաշվարկ,

2) Հրազդանի բժշկական կենտրոնի շտապ օգնության ծառայության 1 բրիգադ,

3) Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Հրազդանի բաժին,

4) Հայաստանի Հանրապետության Ոստիկանության ճանապարհային ոստիկանության 3-րդ սպայական գումարտակի 2-րդ վաշտի 1 հաշվարկ,

5) *«Լազուր»* պետական ոչ առևտրային կազմակերպության անձնակազմ:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ Ա. Ամիրջանյանին՝

1) ապահովել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2019 թվականի սեպտեմբերի 11-ը ներկայացնել հաստատման,

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց, ներգրավված ուժերի, ինչպես նաև համապատասխան գույքի ու տարածքի նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի՝ N 2 հավելվածի,

3) ապահովել համագործակցությունն ուսումնավարժության մասնակիցների հետ,

4) ուսումնավարժության մասնակիցներին ծանոթացնել ուսումնավարժության անցկացման ընթացքում անվտանգության պահպանման կանոններին,

5) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2019 թվականի սեպտեմբերի 17-ին:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ուսումնավարժության անցկացման ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները,

2) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ,

3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

7. Սույն որոշման մասին իրազեկել ըստ առնչության:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Վ. Վարդանյանի* վրա:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի 10
ք. Հրազդան
N 188-Ա

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 188-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ «ԼԱՋՈՒՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

1. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Ա. Ամիրջանյան,

2. Ուսումնավարժության միջնորդական խմբի ղեկավար - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ-վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Ա. Գյուրջինյան,

3. Ուսումնավարժության միջնորդական խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Գ. Պետրոսյան,

4. Ուսումնավարժության միջնորդական խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Գ. Ղազարյան,

5. Ուսումնավարժության միջնորդական խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Ա. Սիմոնյան,

6. Ուսումնավարժության միջնորդական խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Տ. Կարապետյան,

7. Ուսումնավարժության գործնական միջոցառումների ղեկավար - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության Հրազդանի թիվ 44 հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար, փ/ծ մայոր Ս. Դավթյան:

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 188-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ «ԼԱՋՈՒՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողներ	Նշումներ կատարման մասին
	Փաստաթղթերի մշակում			
1.	Ելակետային տվյալների որոշում՝ անցկացման ժամկետ, վայր, մասնակիցների կազմ, մտահղացում, անցկացման կարգ	մինչև օգոստոսի 31-ը	Ուսումնավարժության ղեկավար, ղեկավարման շտաբի պետ	
4.	Ուսումնավարժության մտահղացման սխեմայի մշակում	մինչև սեպտեմբերի 05-ը	Ղեկավարման շտաբի պետ	
	Ուսումնավարժության անցկացման պլանի մշակում	մինչև սեպտեմբերի 09-ը	Ղեկավարման շտաբի պետ	
5.	Ուսումնավարժության փաստաթղթերի հաստատման ներկայացում	մինչև սեպտեմբերի 11-ը	Ղեկավարման շտաբի պետ	
	Ուսուցանվողների նախապատրաստումը			
6.	Ուսումնավարժության կազմակերպման և անցկացման փաստաթղթերի հետ ծանոթացում	մինչև սեպտեմբերի 16-ը	Ղեկավարման շտաբի պետի տեղակալ	
7.	Ստորաբաժանման խմբերի հետ վարժանքի անցկացում	մինչև սեպտեմբերի 16-ը	Ղեկավարման շտաբի պետ	
8.	Անձնակազմին անվտանգության կանոնների հետ ծանոթացում	մինչև սեպտեմբերի 18-ը	Ղեկավարման շտաբի պետ	
	Ուսումնավարժության գործնական տեղամասերի նախապատրաստում			
9.	Ուսումնավարժության վայրի տեղազննում	մինչև սեպտեմբերի 11-ը	Ղեկավարման շտաբի պետ	
10.	Տեղամասերի նախապատրաստում	մինչև սեպտեմբերի 19-ը	Ղեկավարման շտաբի պետ	
	Ուսումնա-մեթոդական բազայի նախապատրաստում			
11.	Նմանակման համար անհրաժեշտ գույքի նախապատրաստում	մինչև սեպտեմբերի 19-ը	Ղեկավարման շտաբի պետ	

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 188-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՍԽԵՄԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՀԶՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ «ԼԱՔՈՒՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ



ՀԱՎԵԼՎԱԾ N 4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 188-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ «ԼԱԶՈՒՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Թեմա՝ «Քիմիական վտանգավոր օբյեկտում վթարի դեպքում անձնակազմի պաշտպանության միջոցառումների իրականացումը»:

Ուսումնավարժության նպատակները՝

1. Կատարելագործել «Լազուր» պետական ոչ առևտրային կազմակերպության և Հրազդանի թիվ 44 հրշեջ փրկարարական ջոկատի գործնական հմտությունները փրկարարական աշխատանքներ իրականացնելիս:

2. Կատարելագործել արձագանքող ուժերի և օբյեկտի կազմավորումների գործողությունների ներդաշնակումը:

Ուսումնավարժության մասնակիցների կազմը՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության Հրազդանի թիվ 44 հրշեջ փրկարարական ջոկատի 2 մարտական հաշվարկ, Հրազդանի բժշկական կենտրոնի շտապ օգնության ծառայության բրիգադ, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Հրազդանի բաժին, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության ճանապարհային ոստիկանության 3-րդ սպայական գումարտակի 2-րդ վաշտի 1 հաշվարկ:

Տևողությունը՝ Ժամը 11:00-ից 12:00-ն:

Անցկացման վայրը՝ ք.Հրազդան, Ջովաբեր-Դդմաշեն ավտոճանապարհ-3, «Լազուր» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության մտահղացում՝

Ստեղծված իրավիճակը՝ 19.09.2019թ. ժամը 11:00-ի սահմաններում «Լազուր» պետական ոչ առևտրային կազմակերպության սառնարանային պահեստների տարածքում՝ կոմպրեսորային արտադրամասում տեղի է ունեցել արտադրական վթար, որի հետևանքով հնարավոր է ամոնիակի արտահոսք: Աշխատողների շրջանում առկա են վիրավորներ:

«Լազուր» պետական ոչ առևտրային կազմակերպությունում աշխատում են 3 մարդ, Հրազդանի թիվ 44 հրշեջ փրկարարական ջոկատից մոտ 8 կմ հեռավորության վրա:

«Լազուր» պետական ոչ առևտրային կազմակերպության սառնարանային պահեստների տարածքում հոսանքալարերի կարճ միացման հետևանքով հրդեհ է բռնկվել: Վնասվել են մի շարք համակարգեր, առկա է ամոնյակի արտահոսքի վտանգ: Աշխատողների շրջանում առկա են վիրավորներ: «Լազուր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը գտնվում է ք. Հրազդան, Ջովաբեր-Դդմաշեն ավտոճանապարհ-3 հասցեում, Հրազդանի թիվ 44 հրշեջ փրկարարական ջոկատից մոտ 8 կմ հեռավորության վրա:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հ /h	ԺԱՄԱՆԱԿԸ (աստղաբաշխական)	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1	2	3	4	5	6
1.	11:00-11:05	Կազմակերպության անձնակազմի ազդարարում և 911 ծառայության ահազանգում	Կազմակերպության հերթապահին տալիս է կարգադրություն «Ուշադրություն բոլորին» ազդանշան հնչեցնելու մասին: Հսկում ազդանշանի հասցնումը կազմակերպության կազմավորումներին	«Լազուր» պետական ոչ առևտրային կազմակերպության հերթապահը ազդարարման լոկալ ցանցի միջոցով անձնակազմին հաղորդում է «Ուշադրություն բոլորին: Տեղի է ունեցել քիմիական վթար» ազդանշանը և զանգահարում է «911» ծառայություն: Կազմակերպության հետախուզական և փրկարարական կազմավորումները դադարեցնում են արտադրական գործընթացը, ստանում անհատական պաշտպանության միջոցներ և ներկայանում հավաքի նշված վայր՝ խնդրադրման:	Հետևում են ազդարաման ընթացքին
2.	11:05-11:20	Հետախուզության և տարահանման կազմակերպում, իրականացում	Ներկայացնում է ստեղծված իրավիճակը և տալիս կարգադրություն՝ կազմակերպության տարածքում հետախուզություն և տարահանում իրականացնելու վերաբերյալ	Կազմակերպության հետախուզական կազմավորումները իրականացնում են հատուկ հետախուզություն և զեկուցում արդյունքների մասին: Միաժամանակ իրականացնում են կազմակերպության տարածքում գտնվող մարդկանց տարահանում: Անվտանգ գոտում անցկացնում են մարդկանց քանակի ճշտում, հաշվառում:	Հետևում են հետախուզության, տարահանման իրականացման գործընթացին և անվտանգության կանոնների պահպանմանը

	11:00-11:55			Կազմակերպության անձնակազմի կողմից գործի են դրվում ավտոմատ փականների և վթարների տեղափակման ինքնաշխատ համակարգերը, իրականացնում են միջոցառումներ համակարգերի անվթար կանգնեցման ուղղությամբ, իրականացնում են վնասված սարքավորումների վերանորոգում:	
3.	11:15-11:55	Արձագանքող ուժերի ժամանում և համապատասխան աշխատանքների իրականացում	Ներկայացնում է ստեղծված իրավիճակը և տալիս կարգադրություն փրկարարական, հրդեհաշիջման, վթարավերականգնողական և տուժածներին օգնություն ցուցաբերելու աշխատանքների իրականացման վերաբերյալ	Հրազդանի թիվ 44 հրշեջ փրկարարական ջոկատի ժամանում: Կազմակերպության տարածքում իրականացնում են՝ 1) բացազատում, հետախուզություն և իրավիճակի գնահատում 2) հրդեհաշիջում 3) կազմակերպության տարածքում գտնվող մարդկանց տարահանում 4) վիրավորներին օգնության ցուցաբերում և հանձնում բուժանձնակազմին 5) վարակված ամպի տարածումը կանխելու նպատակով ջրային կամ չեզոքացնող լուծույթներով ջրային վարագույրի տեղադրում 4) անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում	Հետևում են իրականացվող աշխատանքներին
				Ժամանած փրկարար ուժերը կազմակերպության փրկարարական կազմավորման հետ համատեղ իրականացնում են փրկարարական աշխատանքներ: Շենքում մնացել էին 3 վիրավորներ, որոնց տարահանում են և հանձնում բուժանձնակազմին: Շենքի արևմտյան կողմում բռնկված	

				հրդեհը մարվում է և կանխվում տարածումը:	
			Ներկայացնում է ստեղծված իրավիճակը և տալիս ցուցումներ անհրաժեշտ աշխատանքների իրականացման վերաբերյալ	Ստիկանության հաշվարկները իրականացնում են՝ 1) երթևեկության սահմանափակում 2) հասարակական կարգի պահպանության իրականացում	
				Շտապ օգնության բրիգադները ժամանում են դեպքի վայր: Իրականացնում են տուժածների առաջին բուժօգնության ցուցաբերում և տեղափոխում մասնագիտացված բուժհաստատություններ	
4.	11:55-12:00	Ուսումնավարժության արդյունքների ամփոփում	Գնահատում է ուսուցանվողների գործողությունները, նշում թերությունները և տալիս հանձնարարականներ դրանց վերացնելու ուղղությամբ	Մասնակցում են ուսումնավարժության ամփոփմանը	Մասնակցում են ուսումնավարժության ամփոփմանը
5.	12:00	Ուսումնավարժության ավարտ	Հայտարարում է ուսումնավարժության ավարտ		